ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝ զբաղեցրած պաշտոնը.

Վահե Ասրյան, ՀՀ ֆինանսների նախարարության տնտեսական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության տնտեսության ոլորտների բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Լեմոնտ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ), 2023 թվականի հոկտեմբեր 1-ից մինչև հոկտեմբեր 8-ը:

3. Հրավիրող կողմը.

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ՄԱԳԱՏԷ)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել ատոմային էլեկտրակայանների նախագծերի ֆինանսավորման առաջադեմ մոտեցումների վերաբերյալ միջտարածաշրջանային վերապատրաստման դասընթացին և ձեռք բերել գիտելիքներ հիմնական այն հարցերի վերաբերյալ, որոնց պետությունը պետք է հաշվի առնի միջուկային ծրագիրը նախագծելիս:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի ընթացքում, մասնավորապես քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Միջուկային էներգիայի կայունության համատեքստը
2) Տնտեսական և ոչ շուկայական նկատառումներ էլեկտրաէներգիայի արտադրության տեխնոլոգիաների համեմատության մեջ
3) Ֆինանսավորման աղբյուրներն ու կառուցվածքները
4) Ատոմային էներգետիկայի նախագծերում ֆինանսավորում և ռիսկերի բաշխում
5) Պայմանագրի կնքում և ռիսկերի բաշխում
6) Ֆինանսական մոդելավորում (ֆինանսական մոդելների բնույթը, օգտագործումը և սահմանափակումները)
7) Միջուկային ծրագրի դեպքերի ուսումնասիրություններ

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Դասընթացին ներկա են գտնվել տարածաշրջանի 10-ը երկրների 18 մասնակիցներ: Դասընթացի ընթացքում ՄԱԳԱՏԷ-ի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսություններ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի ռեժիմով: Իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ (մասնավորապես՝ ուսումնական խմբային խաղեր, խմբերին առաջադրված խնդիրներ և այլն), որի արդյունքում յուրաքանչյուր խմբի կողմից ներկայացվել են վերոնշյալ աշխատանքների հետ կապված առաջարկներ և կազմակերպվել են քննարկումներ:

7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ներկայացված նյութերը և քննարկված թեմաները հիմնականում համապատասխանում էին ՀՀ ֆինանսների նախարարության տնտեսական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության առջև դրված խնդիրներին և դրանք կիրառելի կլինեն վարչության գործառույթների շրջանակներում իրականացվող աշխատանքների ընթացքում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

10 հոկտեմբեր 2023թ

Վահե Ասրյան